

րանի եւ համաձայն փառաւոր վճռոյ նորին, անփոփոխ, մշտնջենաւոր և հաստատուն կերպիւ գործադրեալիք. Ռէ-
ճէպ վերջ 1779, (1852-53): Այս հրովարտակ է 'ի հաս-
տատութիւն առաջնոյն:

Սոյն արձաթեայ ատոյն յառաջագոյն բեւեռեալ էին
Լատինք յեկրն Քեթղեհէմի 'ի տեղի Յննդեան Քրիստոսի
Փրկչին մերոյ, որպէս յայտ առնէ հին թուականն նորին:
Սակայն 'ի թուին 1847 յանկարծ անյայտ եղեւ աստղն
'ի տեղւոյն անտի, յորմէ ծագեցաւ վէճ եւ խռովութիւն
'ի մէջ Յոյն և Լատին կղերց. ուստի հարկ եղեւ Սուրբան
Մէճիտ Արքայի առ 'ի բառնալ զխռովութիւնն երկուց աղ-
քաց՝ տալ վերստին շինել և կերտել ըստ առաջին ձեւոյն
զատոյն զայն, և իբրեւ յիշատակ ընդհանուր քրիստոնէից,
որպէս յայտ առնեն բանք նորին հրովարտակին, և առա-
քեալ ետ վերստին բեւեռել 'ի տեղւոյն իւրում՝ ըստ թա-
խանձանաց Լատինաց յամի Տեառն 1853, յորոյ շուրջն
գրեալ է վերաառութիւն 'ի Լատին բարբառ այսպէս:
HIC DE VIRG INE MARIA IESUS CHRITUS NATUS
EST 1717. Այսինքն Սուրբ Կոյսն Մարիամ զՅիսուս Քրիս-
տոս ծնաւ աստ:

Գ Լ Ո Ի Խ Կ Ա .

Մարտիմիլէն մեծ դուքսն: Արեւելեան պատերազմ: Կռիւ 'ի Տաճարին
Ս. Գարութեան: Վանք Ռուսաց: Կոստանդին մեծ դուքսն: Կատրած
Դամասկոսի: Վախճան Յովնանու Պատրիարքի: Տեղակալ Վրդանէս
Վարդապետ: Յակոբ Պատրիարք: Ընտրութիւն Եսայեայ վարդապետի,
և վերջ:

ԻՍՄԻՆ ժամանակի եկն յուխտ և յերկրպագութիւն
յերուսաղէմ Տնօրինական Ս. Տեղեաց Քրիստոսի Մաքսիմի-
լիէն մեծ Դուքսն, եղբայր Յովսէփ Ֆրանչիսկոս Կայսեր
Աւսդրոյ—Հունգարիոյ, ուրում արար արժանաւոր ընդու-
նելութիւն Կուսակալն Երուսաղէմի զօրականօք և Քաղա-
քական տեսչութեամբ: Իսկ Լատին Պատրիարքն Յովսէփ